Հավելված
ՀՀ կառավարության 2009 թվականի
հունիսի 11-ի N - Ն որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏՈՂ ՄԱՐԶԻՉ-ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետությունում գործում է 166 մանկապատանեկան մարզադպրոց: Այդ մարզադպրոցներում 45 մարզաձևերով աշխատում են 1834 մարզիչ-մանկավարժ, այդ թվում՝ համայնքային ենթակայության մարզադպրոցներում՝ 983, մարզպետարանների, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ենթակայության մարզադպրոցներում՝ 533, մարզական հասարակական կազմակերպություններում՝ 318 մարզիչ-մանկավարժ:

Միայն Երևանում աշխատում է 729 մարզիչ-մանկավարժ: Մարզիչներից 1175-ը ունի բարձրագույն մասնագիտական կրթություն: «Մանկապատանեկան սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (21-րդ հոդվածի 13-րդ կետ) մանկապատանեկան սպորտի բնագավառի մարզիչ-մանկավարժների պատրաստումը և վերապատրաստումը կազմակերպում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը: Մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող կադրերի վերապատրաստման խնդիրը խիստ արդիական է, քանի որ 1834 մարզչից 659-ը չունի բարձրագույն մասնագիտական կրթություն և 1990-ական թվականներից, կապված սոցիալ-տնտեսական իրավիճակի կտրուկ փոփոխման, ինչպես նաև պատե-

բազմական իրավիճակի հետ, Հայաստանի Հանրապետությունում չեն իրականացվել վերապատրաստման շարունակական ծրագրեր, որի հետևանքով աշխատող մարզչական կադրերը հետ են մնացել արագ, թռիչքաձև զարգացում ապրող սպորտային նվաճումներից: Այդ է վկայում նաև 1990-ական թվականներից սկսած երկար ժամանակ միջազգային մրցաշարերում Հայաստանի Հանրապետության մարզիկների բարձր արդյունքներ չունենալը:

Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի և առանձին ֆեդերացիաների կողմից իրականացվող վերապատրաստման դասընթացների ծավալները խիստ սահմանափակ են՝ հիմնականում ընդգրկելով Երևան քաղաքի և մոտակա մարզերի մանկապատանեկան մարզադպրոցների ոչ մեծ թվով մարզիչ-մանկավարժների:

Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեն 2006, 2007 և 2008 թվականներին կազմակերպել է 10-15 օր տևողությամբ, 8 մարզաձևից՝ յուրաքանչյուրից 25 մարզչի մասնակցությամբ Մարզչական տեխնիկական կուրսեր:

Խնդրի լուծմանն օժանդակելու նպատակով Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը համագործակցության պայմանագրեր է կնքել Բելառուսի Հանրապետության, Լայպցիգ և Մոսկվա քաղաքների հետ, որտեղ ներառվել են նաև վերապատրաստմանը վերաբերող կետեր:

Նշված խնդիրը լուծելու համար Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը նախատեսում է իրականացնել մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների վերապատրաստման կազմակերպման ծրագիր (այսուհետ՝ ծրագիր):

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակը մանկապատանեկան մարզադպրոցների մարզիչ-մանկավարժներին ուսուցման ժամանակակից պահանջների և մեթոդների, սաների ֆիզիկական դաստիարակության արդի հիմնախնդիրների, մարզչական և կազմակերպչական նորագույն նվաճումների և արդյունքների մասին իրազեկումն ու ուսուցանումն է:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐԸ

Ծրագրի խնդիրը Հայաստանի Հանրապետությունում աշխատող 1834 մարզիչ-մանկավարժից յուրաքանչյուր տարի 180-210 անձի համար ցիկլային դասընթացների միջոցով վերապատրաստման անցկացումն է:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Վերապատրաստումն իրականացվելու է 14 օր տևողությամբ, 30 անձից բաղկացած խմբով, 72 ժամ ընդհանուր ծավալով, շուրջ 24 թեմաներից ու առարկաներից, ինչպես տեսական, այնպես էլ գործնական պարապմունքների միջոցով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի կողմից հաստատված ուսումնական պլանի: Դասընթացները վարելու են հրավիրված բարձրակարգ մասնագետները: Տարվա ընթացքում նախատեսվում է վերապատրաստել 180 մարզիչ-մանկավարժի: Վերապատրաստման խմբերի ձևավորումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը: Մարզչական կադրերի վերապատրաստման տարեկան ժամանա-

կացույցը, մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժ-ների վերապատրաստման կազմակերպման ուսումնական պլանը հաստատում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարը։ Տարեկան իրականացվելու է վերապատրաստման 6 ցիկլ, որից 4-ը՝ մարզերի, իսկ 2-ը Երևան քաղաքի մարզիչների համար։ Դասընթացներն անցկացվելու են Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ենթա-կայության «Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» պետա-կան ոչ առևտրային կազմակերպությունում՝ նպատակ ունենալով մարզերից վերա-պատրաստման գործուղված մարզիչներին ապահովելու հանրակացարանով և տեղում օրական երեքանգամյա սննդով՝ պահպանելով նրանց միջին աշխատավարձը։ Մարզի-չ-մանկավարժի գործուղման ծախսերը հոգում է նրա հիմնարկը։ Պետական ոչ առևտրային կազմակերպությունում անցկացման վայրի ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այնտեղ առկա են բավարար նպաստավոր պայմաններ՝ ինչպես գործնական և տեսական պարապմունքներ անցկացնելու, այնպես էլ՝ կեցության համար։ Վերապատրաստման դասընթացի կազմակերպումը չի խաթարի քոլեջի ուսումնամարզական նորմալ գործընթացը, այլ լրացուցիչ հնարավորություն կընձեռի նրա աշխատակազմի 3 անդամին՝ ստանձնելու կազմակերպչական լրացուցիչ պարտավորություններ՝ ստանալով համապատասխան աշխատավարձ։ Վերապատրաստման ցիկլի վերջում մարզիչ-մանկավարժներն ստուգարք կհանձնեն 5 անձից բաղկացած քննական հանձնաժողովին, որի կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարը։

Վերապատրաստման դասընթացներն ավարտած մարզիչ-մանկավարժներին տրվելու են Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի կողմից հաստատված ձևին համապատասխան ավարտական վկայականներ։

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Ծրագրի ֆինանսավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից ներկայացվող նախահաշվի սահմաններում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ